## Արձանագրություն N 2-1

**ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-26/19 ծածկագրով «Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» ՊՈԱԿ-ի (բռնցքամարտի և ձյուդոյի մարզադահլիճ) կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

13.07.2026թ.
ժամը 10:00

ք.Երևան

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Քանանյան

Անդամներ՝ Ս. Նունյան
Կ. Հարությունյան
Ա. Խաչատրյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մանուչարյան

Բացակայում էր հանձնաժողովի անդամ Գ. Գևորգյանը

**1. Գնման ընթացակարգի հայտերի բացման օրվա և ժամի, ինչպես նաև՝ հայտ ներկայացրած մասնակիցների մասին**

---------------------------------------------------------------------------
(Հ. Քանանյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

ա) մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել,

բ) գնման ընթացակարգի հայտերը բացվել են էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով 2026 թվականի հուլիսի 13-ին ժամը 10:00-ին,

գ) գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

ՀՀ դրամ

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Գնման գին | Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|---|
| 1 | «ԹԱԹ» ՍՊԸ | 15 575 380 | 12 500 000 | 0 | 12 500 000 |
| 2 | «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ | | 14 900 000 | 0 | 14 900 000 |

1.2 Մասնակիցները հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված չեն գնումների գործընթացին իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:*

## 2. Հայտ ներկայացրած մասնակիցների անվանումները, գործունեության հասցեները, կապի միջոցները, էլ. հասցեները

----------------------------------------------------------------------------------------

(Հ. Քանանյան)

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Գործունեության հասցե | Կապի միջոց | Էլեկտրոնային փոստի հասցե |
|---|---|---|---|---|
| 1 | Վահրամ Կնյազյան Ա/Ձ | Ք. Արթիկ, Բաղրամյան 1/2 | 096-10-10-20 | systemsvava@gmail.com |
| 2 | «ԹԱԹ» ՍՊԸ | Ք. Երևան, Դավիթաշեն 2 թաղ., շ. 7, բն. 45 | 091 43 03 74 | tat-ltd@mail.ru |

## 3. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

----------------------------------------------------------------------------------------

(Հ. Քանանյան)

3.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ և հրավերի 8.21 կետերը, ինչպես նաև գնահատող հանձնաժողովի 13.07.2026թ. որոշումը՝ հրավերով սահմանված հավելված N1.3-ի համաձայն մասնակցի կողմից ներկայացված տվյալների իսկությունը ստուգելու նպատակով գնահատող հանձնաժողովը որոշեց հարցում կատարել՝

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտե՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՊԵԿ-ի կողմից վերահսկվող եկամուտների գծով մասնակցի հարկային պարտավորությունների հանրագումարը (բոլոր հարկատեսակների մասով) ընդհանուր հինգ հարյուր հազար ՀՀ դրամը գերազանցող ժամկետանց պարտավորության մասին:

3.2 Հայտերի գնահատման նիստը հրավիրել իրավասու մարմնի կողմից եզրակացությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 10:00-ին, ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -4, դեմ-0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------------------------------------- Հ. Քանանյան

Անդամներ՝ ---------------------------------------- Ս. Նունյան

---------------------------------------- Կ. Հարությունյան

---------------------------------------- Ա. Խաչատրյան

Հանձնաժողովի

քարտուղար՝ ---------------------------------------- Ա. Մանուչարյան

# ՈՐՈՇՈՒՄ

**ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-26/19 ծածկագրով «Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» ՊՈԱԿ-ի (բռնցքամարտի և ձյուդոյի մարզադահլիճ) կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

13.07.2026թ.

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ և հրավերի 8.21 կետերը՝ հրավերով սահմանված N 1.3 հավելվածի համաձայն մասնակցի կողմից ներկայացված տվյալների իսկությունը ստուգելու նպատակով գնահատող հանձնաժողովը որոշեց հարցում կատարել ՀՀ պետական եկամուտների կոմիտե՝ մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ վերջինիս կողմից վերահսկվող եկամուտների գծով մասնակցի հարկային պարտավորությունների հանրագումարը (բոլոր հարկատեսակների մասով) 500 000 ՀՀ դրամը գերազանցող ժամկետանց պարտավորությունների մասին:

Գնահատող հանձնաժողովը մասնակիցների հայտերը գնահատելու է՝ հիմք ընդունելով իրավասու մարմնի կողմից ստացված տեղեկատվությունը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ................................................................ Հ. Քանանյան

Անդամներ՝ ................................................................ Ս. Նունյան

................................................................ Կ. Հարությունյան

................................................................ Ա. Խաչատրյան